

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆՑ ՌԻՏՏԱՒՈՐՆԵՐԸ

Հակառակ Սուրբ Երկրեն ներս տիրող ներկայ փաղափական խառնակ կացութեան, յարաբերաբար տօնական խանդավառութեամբ նշուեցան 2004 տարուան Ս. Ծննդեան տօնակատարութիւնները եւ անոնց նախորդող Աւագ Տօները: Ինչպէս նախորդ տարի Աւագ Շաբթուան առթիւ, այս տարի եւս հոգեւորական ուխտւորներ Հայաստանէն, Անթիլիասէն եւ հեռաւոր Աւստրիալիայէն հիւրընկալուեցան Հայոց Վանքէն ներս Յունուար 13-25:

Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ս. Օծուքին, Գարեգին Բ. Սրբազ-նագոյն Կաթողիկոսի կարգադրութեամբ Բեթղեհէմի Ս. Ծննդեան հոգեպարար պաշտամունքներուն իրենց մասնակցութիւնը բերին Ս. Էջմիածնէն՝ Տ. Սիրոն Եպս. Աղամեան՝ Արմաւիրի Թեմի Առաջնորդ եւ Տ. Վարդան Արդ. Նաւա-սարդեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տաճարի Աւագ Լուսարարի օգնական:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, Նորին Ս. Օծուքին Արամ Ա. Վեհա-փառին կարգադրութեամբ նոյնպէս մասնակցութիւնը ունեցանք Մշակութային եւ Էթիմէնիկ Հարցերու պատասխանատու Տ. Նարեկ Եպս. Ալեմէմէզեանի:

Աւստրալիայէն, մեր միաբաններէն Տ. Աղան Արք. Պալիօգեան՝ Առաջ-նորդ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Թեմի եւ Հայրապետական Պատուիրակ Ծայրագոյն Արեւելի, նոյնպէս մեր մէջ գտնուեցաւ:

Կաղանդի առաւօտուն, Պատրիարք Սրբազան Հայրը հանելի անակնկալ մատուցեց, Հայր Վարդանէն խնդրելով որ իւր թաւ ձայնով կատարէ ժողովրդական երգի մի հատուած՝ Պատրիարքարան հաւաքուած ժողովուրդի ներկայութեամբ, եւ բաժանուելիք Ամանորեան նարինջի կողքին իբրեւ նուէր: Այնուհետեւ ներկայացուեցան հիւր հոգեւորականները:

Եկեղեցական արարողութեանց զուգընթաց հիւր հոգեւորականները ուխտի պատարագներ մատուցին Ս. Յարութեան Տաճարի Քրիստոսի Ս. Գերեզմանի, Գեթսեմանի ձորին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Տաճարի Տիրամօր Ս. Գերեզմանի, Բեթղեհէմի Ս. Ծննդեան Տաճարի Ս. Այրի, եւ Ս. Յակոբեանց Տաճարի Աւագ Խորանի եւ Ս. Գլխադրի սեղաններու վրայ: Անոնց ժամանակացոյցին մաս կազմեցին նաեւ կազմակերպուած պտոյտ-ուխտագնացութիւնները դէպի Քրիստոսակոխ վայրերը, ինչպիսին են Գալիլիա, Նազարէթ, եւ այլ սրբավայրեր:

Աննախընթաց էր ասոնց կարգին Յունուար 22ին կազմակերպուած Միաբանական եւ պաշտօնական երթը եւ այցելութիւնը դէպի Յորդանան գետ՝ ուղեկցութեամբ Իսրայէլեան զինուորականներու: Պատրիարք Սրբազան Հօր նախագահութեամբ Յորդանան Գետի ափին կատարուեցաւ Զօրօհնէքի արա-րողութիւն եւ երգուեցան Ս. Ծննդեան շարականներ: Թեթեւ իջնող անձրեւին ներքեւ Երիֆովի Փորձութեան Լեռան ստորոտին այցելութիւն տալէ յետոյ, կէսօրուան ճաշի կարգադրութիւն եղած էր Երիֆովի ամայացած ճաշա-րաններէն մէկուն հետ: Մի փանի ժամուան հանելի ընկերակցութենէ, երգէ եւ քարի մաղթանքներէ յետոյ, վերադարձանք Երուսաղէմ:

Այս շրջանին, Պատրիարք Սրբազան Հայրը առիթներ ունեցաւ առանձ-նապէս հանդիպելու հիւր հոգեւորականներուն հետ, եւ անդրադառնալու Երուսաղէմի Ս. Աթոռոյս ներկայ կացութեան եւ Հայաստանեայց Եկեղեցին յուզող հարցերուն:

Իսահակ Արդ. Մինասեան